«ԱՐՑԱԽՆ ԻՄ ՑԱՎՆ Է»

Բաքվում ապրած 25 տարիների ընթացքում հաճախ էի փորձում ինձ համար թանկ ու սիրելի մարդկանց հետ հանդիպումներից ստացած տպավորություններիս ու հուշերիս միջից բեկորներ գտնել, ողողվել այդ բեկորներից ճառագայթող լույսով։ Ու ամեն անգամ էությանս մեջ հայտնվում էր Բագրատ Ուլուբաբյանը՝ անվանի գրողը, պատմաբանն ու հրապարակախոսը։ Ես նրա բոլոր գրքերն էլ կարդացել եմ, որ մեծ դժվարությամբ ձեռք էի բերում Բաքվի պայմաններում։ Բագրատ Ուլուբաբյանին առաջին անգամ տեսա 1965-ին, «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունում։ Մեծ հիացմունք ապրեցի։ Նրա ասպետական, վայելչորեն գեղեցիկ արտաքինը, բարձր մտավորականի կեցվածքը ձգում, տանում են քեզ դեպի մարդկային հոգու վեհության աշխարհը։

...Գնացել էի «Վերածնված Հայաստան» ամսագրի խմբագրություն, Վահագն Դավթյանի մոտ (այն ժամանակ ամսագրի գլխավոր խմբագիրն էր). իմ խորին շնորհակալությունը հայտնելու բանաստեղծին՝ բնակարանի փոխանակման հարցում ինձ օգնելու համար։ Մերժել էին փաստաթղթերը՝ ասելով. գրանցումը չենք կարող կատարել, երեխաներն ավելորդ են։ Միակ հույսս Վահագն Դավթյանն էր։ Գնացի մոտը։

— Այդպես էլ ասացի՞ն, որ երեխաներն ավելո՞րդ են։

— Այո։

Դեմքը ջղաձգվեց, քունքի երակը թրթռաց։

— Ո՞նց թե...

Երկու ամսվա անասելի տառապանքներից հետո երկու օրում հարցը լուծվեց։

Ուրեմն, գնացել էի բանաստեղծին տեսնելու։ Խմբագրության ընդունարանը լեփլեցուն էր այցելուներով, մեծ մասը՝ փախստականներ։ Հոգսն ու ցավն էին բերել Վահագն Դավթյանի մոտ։ Անսպասելիորեն բացվեց խմբագրի առանձնասենյակի դուռը, ու երևաց սիրելի բանաստեղծը։ Ինձ տեսնելուն պես, հարցրեց.

— Հը, ինչպե՞ս են գործերդ,— ու լսելով, որ ամեն ինչ լավ է, չթողեց շարունակեմ, հարցրեց,— ճանաչո՞ւմ ես Բագրատին։

Մի պահ շփոթվեցի։ Իմ դեմ Բագրատ Ուլուբաբյանն էր։ Քանի տարի է՝ չէի տեսել։ Երևի քեզ համար ամենասիրելի մարդու հանդեպ տածած խոր հարգանքի զգացումից է ծնվում երկյուղածությունը, որ ես ապրեցի այդ պահին։ Նա այն մարդն է, որի բարությունից այսօր էլ բաժին են ստանում նրանք, ովքեր առնչվում են հետը։ Բայց զրույցի ժամանակ չունեի։ Շտապում էր. Վահագն Դավթյանի հետ պիտի տեղ գնային, ու ես ընդամենը հասցրի վերցնել Եղվարդի իր տան հեռախոսի համարը։ Երեք տարի առաջ էր դա։

Ինձ համար մեծագույն բերկրանք է Բագրատ Ուլուբաբյանին հանդիպելը։ Նրա հետ զրուցելուց մեջս արթնանում են այն ամենալավն ու առաքինին, ինչը հատուկ է արցախցու էությանը, նրա մարդկային շաղախին։ Ինքնամփոփվում ես մի տեսակ ու մտովի քայլում պապերից կածաններով։ Մարդկային կրքերի ալեբախումների մեջ նա միշտ էլ վեհ ու բարձր է մնացել՝ որպես ազնվագույն քաղաքացի՝ ամեն ինչից վեր դասելով ազգի շահը։ Հենց սա է իսկական մտավորականի կոչումը։ Այսպիսին է Բագրատ Ուլուբաբյանը։ Ներքին հպարտություն ես ապրում քո ժողովրդի նման զավակներով։

Նոր գիշերն անց էր, Վալենտին Պիկուլի «Բայազետն» էի կարդում, երբ հնչեց հեռախոսազանգը։

— Վաղը գնանք Եղվարդ, Բագրատի մոտ։ Իրեն ասել եմ, որ Սերժին էլ եմ բերելու,— Բանաստեղծ Ռոզդան Ջանյանն է։

Հոգնած ու չարչրված մարդ[illegible] ասես միանգամից դուրս հանեցին Բայազետի [illegible] կրակների միջից։ Թվաց, թե վաղը Ռոզդան Ջանյանի հետ պիտի մեկնենք Ղարաբաղ, որ հիմա մանկության պես հեռու է, այդքան մոտիկ ու այդքան հեռու... Առավոտյան պայմանավորված ժամին հանդիպեցինք։ Ռոզդան Ջանյանն արդեն հասցրել էր օրվա թերթերը ձեռք բերել. «Ախր, ես գիտեմ, նա առանց թերթի չի կարող»։

Մեկ ժամ չանցած սիրելի գրողի տանն ենք։ Ուր նայում ես՝ գրքեր են՝ սեղանին, մահճակալին, աթոռներին։ Մտնում ենք աշխատասենյակ։ Ահա այստեղ, այս չորս պատերի ներսում են ծնվել նրա սքանչելի գրքերը։ Ու ես կյանքում առաջին անգամ զգացի գրողի կամքի, նրա ստեղծագործական տառապանքի ուժը։ Միայն ուժեղ մարդը կարող է օրերով, շաբաթներով փակված մնալ չորս պատերի ներսում, ինչպես սառույցների մեջ սեղմված նավը, ու «Սարդարապատ» գրել։ Արտաքուստ զվարթ է, հանգիստ, սակայն զգում եմ՝ ներսում վերքեր են մնում. «Արցախն իմ ցավն է»,— ասաց ու լռեց երկար։ Լռությունն աչքերի մեջ փոխվեց տրտմության։ Այո, Արցախը քո մեծ ցավն է, քո խոր վերքը, որ չի սպիանում։ Ու պիտի մնա վերքն այդ, քանզի բզկտվում, արյունաքամվում է քո սրտաչափ, մի բուռ հողը։ Այն, ինչ դու արեցիր նրա համար, ինքնազոհաբերություն էր, բոլորս գիտենք։ Բնականաբար, պիտի ցասումի փոխարկվեն քո կեսգիշերային անքնության պահերը։ Այո, դեռ երկար պիտի շարունակվի քո ծանր մենամարտը լեռնաշխարհից արթուն զանգերի լեզվակը հատել փորձող թունավոր օձի դեմ։ Իսկ քո միակ զենքը քո տաղանդի ուժն է, քո զորավոր գրիչը։

Ես ուշի-ուշով կարդացել եմ անվանի պատմաբանի՝ հատկապես վերջին տարիներին տպագրված բոլոր հրապարակախոսական հոդվածներն Արցախի հիմնահարցի վերաբերյալ։ Դրանցում արդարության ձայնն է հնչում իր ամբողջ զորությամբ, որ նման է շանթ ու որոտի, և գրողը պատմական ճշմարտացի փաստերով է հիմնավորում դա՝ մերկացնելով զիաբունյաթովների կեղծիքը։ Ասում են՝ Բաքվում հատուկ հետազոտության առարկա են դարձրել Բագրատ Ուլուբաբյանի հոդվածները։ Եվ դա զարմանալի չէ։ Ադրբեջանցի մտավորական կոչվածները գիտեն, թե ում հետ գործ ունեն։ Դեռևս 60-ական թվականներին, երբ ղարաբաղյան հերթական շարժման լիդերը Բագրատ Ուլուբաբյանն էր, Բաքվի բարձրաստիճան չինովնիկները շատ են փորձել կաշառել նրան՝ առաջարկելով մարզում բարձր պաշտոններ։ Իսկ նա ընդամենը քմծիծաղել է՝ հասկացնելով, որ ինքն իր ժողովրդի նվիրյալ զավակն է, որի շահը իր համար վեր է ամեն ինչից։ Ի վերջո, համոզվելով, որ լեռն անսասան է, սկսել են նրա դեմ դավեր նյութել։ Դիմում էին ամեն ստոր միջոցների, սակայն չէր ընկճվում, չէր երերում, արցախցի է, ժայռի նման ամուր։

Քիչ լռելուց հետո շարունակեց.

— Ղարաբաղում արդեն հնարավոր չէր ապրել, նույնիսկ իմ ամենամոտիկ ընկերներն էին խուսափում ինձ հետ հանդիպելուց։ Ես հասկանում էի նրանց, մարդիկ զգուշանում էին, մեկ անգամ տրվող կյանքը թանկ է...

Դուրս եկանք բակ։ Պարզկա օր է։ Գարնանային արևը ծիածաններ է վառել այգու ծաղկած ծառերի ճյուղերին։ Բագրատ Ուլուբաբյանը նայեց ճերմակ խնձորենիներին։ Մեկեն ամպի նման մռայլվեց դեմքը։ Զգում եմ՝ միտքն այնտեղ է՝ Արցախում, ուր վիրավոր են խնձորենիները. վիրավոր է իրեն ծնած հողը։ Այդ պահին նրա հայացքն ասես պիտի բեկանի շանթեր, իր բերդերի կողերին թափվող արճիճե հողմերի շառաչը բեկանի...

...Քայլում ենք դեպի այգու խորքը։ Շատ մոտիկից ջրի ձայն է լսվում։ Քիչ հետո այգու խոտերի միջից եկող արծաթե ձայնը փոխվում է զնգոցի։ Ի՜նչ շքեղ անկյուն է, աշխարհի ժխորից հեռու։ Պառկես կանաչ խոտերին, դեմքդ սուզես ծաղկած սեզերի մեջ ու շնչես այս հողահոտը։ Գրողի այգին... Զգացվում են ամեն ծառ ու թփի հանդեպ տարվող յուրահատուկ խնամքն ու հոգատարությունը։ Այգին նրա ձեռքերի [illegible]։ Մոտենում ենք մոշի թփին, տաք լույս է ճառագայթում նրանից. Արցախյան բերդ ու քարափների շունչն է ծայրեծայր ծփում այս մի բուռ այգում։

ՍԵՐԺ ԱՌԱՔԵԼՅԱՆ